Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Հիշատակարան

1911. հմշ.

Գր. 45. w. 20.

Կ. Գալ.

(Կանոն Հ. Գրիգորյան).

Լեն
575

ՅՇԵԱՏԱԿԱՐԱՆ

ՀԱՅ ԵՐԵՎԵԼԻՆԵՐՈՒ ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ, ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐԸ ՁԵՌԱԳՐԵՐԸ, ԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԵՒԼՆ. ԵՒԼՆ.

1512-1912

ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ 400ԱՄԵԱՅ ՅՈՒԲԵԼԵԱՆԻ ԱՌԻԹՈՎ

ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ՇՔԵՂ. ՏՊԱԳՐՈՒԹԵԱՄԲ

ԿԱԶՄԵՑ
Վ. Գ. ՁԱՐԴԱՐԵԱՆ

ԱԶԱՏ ՄԱՏԵՆԱՇԱՐ ԹԻՒ 20

ԱԲԳԱՐ ԴՊԻՐ ԹՈՒԽԱԹՅԻ
Երկրորդ Տպագրիչ

(Տասը պատկեր)

ՍՈՒԼԹԱՆՇԱՀ (ԱԲԳԱՐԻ ՈՐԴԻՆ)
Մարմ Անտն

ԵՐԿՐՈՐԴ ՀԱՏՈՐ

ՊՐԱԿ ԺԷ.

1911

Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԳՐ. ՕՍՄ. ԳՈՐԾԱԿՑԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
Պապը Ամի Սեպիսքիիր-փողոց թիւ 27

ՀՐԱՏԱՐԱԿԻՉ
Վ. ԵՒ Պ. ՁԱՐԴԱՐԵԱՆ ԵՂԲԱՐՔ
Կ. ՊՈԼԻՍ

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека

Լեռ
575

ԼԻՊ
575

գաղափարակից կը գտնէ դպրոց մը հաստատելու համար։ Կը գրէր այս մեծանուն եկեղեցականը. «Հարկաւոր էր ուրեմն, գլխաւորապէս հարաւային Ռուսաստանի՝ երկրորդարար Տաճկաստանի հայ ազգաց համար այնպիսի ազգային միջակ Ուսումնարան մը, յորում աշակերտք գիշեր ցորեկ մնալով՝ ընդունէին ազգային կրթութիւն և բարոյական դաստիարակութիւն. գոնէ վեց տարի ժամանակով, և նորա մէջի ուսմանց ընթացքը աւարտելէն յետոյ՝ կամեցողը կարենար իւր ուսմունքը կատարելագործել Լազարեան ճեմարանին մէջ, կամ Փարիզ, կամ թէ Մոսկուայի և Փեթերպուրգի համալսարաններուն մէջ»։ Գեղեցիկ գաղափար, իր վարժարանը որով պիտի ըլլար համալսարանական հաստատութեանց պատրաստող աշակերտներու համար լիկիոնական կրթարան մը։

Տեղացի հեղինակաւոր անձնաւորութիւնները՝ կ'իմացնեն Այվազեանին, որ Նախիջևանի և Պեսարապիոյ վիճակին եկեղեցական գրամները երկու անձանց ձեռքին մէջ անցած է մնացած, ատոնք ազնիւութեան և հոգևոր առաջնորդին միջոցով կարելի է օգտակար ընել մատղաշ ուսումնարանին համար։ Եւ ասոր համար, պէտք եղած պատրաստութիւններ կը տեսնուին։ Այվազեան Փեթերպուրգ կ'երթայ. ինքը պետական հեղինակաւոր անձանց հետ ծանօթութիւն ունէր։ Կորչակով իշխանէն իր ուսումնարանին համար նպաստաւոր խօսքեր կ'առնէ. և կ'երթայ նաև ներքին գործոց Ոսիական Լանսքո՛յ կոմսին. որ սիրալիր ընդունելութենէ վերջը կ'իմացնէ թէ Վեհափառ կայսեր կամքը այս է որ դուք լինիք Նախիջևանի և Պեսարապիոյ հայոց վիճակին Առաջնորդ՝ ի տեղի Մատթէոս Արքեպիսկոպոսին, իսկ նա պիտի փոխադրուի Սմոլենսկի Սթոռը, որ Բարսեղ Արքեպիսկոպոսին վախճանելէն ի վեր պարապ է։ Տէրութիւնը կը յուսայ որ այս կարգադրութեամբ, կարող էք դուք աւելի գիւրութեամբ հիմնել ու կառավարել այն ազգային ուսումնարանը՝ որոյ նախագիծը և նպատակը հաճոյ եղած է կայսեր։ Եթէ, ձեր կողմանէ դժուարութիւն մի չունիք այս պաշտօնը յանձն առնելու, խօսք առէք ինձ համարձակ, վասն զի Կայսերական հրովարտակը պատրաստ է և միայն կը մնայ ստորագրութիւնը։ Այվազեան յանձնառու կ'ըլլայ։ Կը յաջողի Նախիջևանի մեծամեծներու և Խալիպեանի միջև ծագած եկեղեցական խնդիրը կարգադրելու. և յիշեալ եկեղեցական գումարէն զատ՝ Յարութիւն աղայ Խալիպեան իր գանձանակէն մեծակա գումար մը կը դնէ Այվազեանի տրամադրութեան տակ, որպէս զի Թէոդոսիայի մէջ բացուի Խալիպեան անուամբ ուսումնարան մը։ Դրամատէրը Նախիջևանի 12 իշխաններու առջև կը յայտնէ Այվազեան առաջնորդին. թէ «լսել եմ որ դուք գիտաւորութիւն ունիք և Տէրութենէն հրաման առած էք ազգային Ուսումնարան բանալու ի Թէոդոսիա. կ'ուզեմ որ այն ուսումնարանին չէնքը ես կանգնեմ իմ սեպհական փողովս, և նորա ծախքը՝ զոր կը հաշուեմ 50,000 ռուբլի արծաթ, այժմ իսկ կը համրեմ ձեր առջևը։ Այս փողը ձեր և իմ կնքովս կնքուած կը մնայ մօտս՝ մինչև որ Ուսումնարանին բացուելուն համար պէտք եղած Կայսերական վճիռը կամ հրովարտակը ընդունինք... Միայն թէ ես այն նուէրը երկու պայմանաւ կ'անեմ. մէկը այս՝ որ Ուսումնարանը իմ անունովս ասուի Խալիպեան Ուսումնարան և երկրորդը այս՝ որ մէջը 20 աշակերտ ձրի ուսում առնուն, և նոքա ասուին Խալիպեան սանք։»

Այդ դրամատէրը պայման կը դնէ, որ իր վարժարանին մէջ անխտիր աշակերտ առնուի հայէն, կաթոլիկէն և բողոքականէն, կ'ուզէ հայ համազգային հաստատութիւն մը։ Ոչ-Լուսաւորչական հայերը ազատ ըլլալու էին կրօնական գիտութիւններէն. անոր վերահսկողը կ'ուզէր որ ըլլար Այվազեանը, որ ինքնիշխան էր իր գործին համար։ Սակայն ամէն տարի ան պարտական էր վարժարանի մասին տեղեկութիւն և հաշիւ ցոյց տալ Օտեսա գտնուող Ուսումնական խնամակալութեան։ Վարժարանը լիակի ծրագրով կը բացուի Թէոդոսիայի մէջ 1858ի Հոկտ. 12ին։ Այդ ուսումնարանին տեսուչ (Ինտիէ՛քթոր) կը հաստատուի Սարգիս Աւետիքեան Տիգրանեանը, որուն ռոճիկ կը սահմանուի տարեկան 1500 ռուբլի արծաթ. և բացի այդկէ ձրի բնակարան, ճրագ և վառելիք։

1862՝ Սեպտ. 8ին Խալիպեան ուսումնարանին նորակառոյց չէնքի հանդիսական բացումը կը կատարուի. մինչև այդ թուականը նորահաստատ վարժարանը արդէն չորս տարուան կեանք մը ունեցած էր։ Հիմնադիրը Այվազովսկի իր ուսումնարանը չի կրնար երկար տարիներով վարել. ան չատ թշնամիներ ունենալով, զինքը ազգին առջև կատաղաբար ցոյց կուտան

Ցիստերնայի
4019
4575-60
29 577

և վարժարանէն կ'ուզեն դուրս ձգել։ Այվազեան 15,000 ռուբլիի պարաք մը ցոյց կուտայ. վարժարանը կը սաւժէ. բարերարը այդ պարաքը վճարելու կարողութիւն չունենար։ Հակառակորդները կը սասղեն զինքը, որով ան Նախիջևանի և Պեսարաբիոյ առաջնորդական պաշտօնէն կը զրկուի ու կ'արտաքսուի նաև իր հիմնած վարժարանէն։ Սարգիս Տիգրանեանին կը յանձնուի անօրէնի պաշտօնը։ 1871 ապրիլ 16ին ակբութեան հեռագրով կը գոցուի վարժարանը, որուն հասոյթը օգտակար կ'ըլլար 1874 օգոստոսի 13ին, նոր Նախիջևան բացած ազգային նոր ուսումնարանի մը։

Գործիչ մը կարելի չէ որ չի հալածուի. ընականաբար Արվազովսքի վարդապետը կը հալածուէր և իր մեծ ընդունակութենէն ազգը չէր օգտուեր. հակառակորդները միշտ կոյր են, անձնական կիրքը հանրական շահերը դիտելու համար աչք չունին։

Իր աշակերտները անհուն հիացումով կը գրուատեն իրենց վարպետին դաստիարակի յատկութիւններն։

(Աղբիւրներ.— Մասեաց Աղաւնիթիւ 2.— Հ. Ս. Երեմեանցի «վարժարանաց պատմութիւն» անտիպ գրեթե։)

ԱԲԳԱՐ ԴՊԻՐ ԹՈԽԱՏԵՑԻ

ԵՒ

ՈՐԴԻՆ ՍՈՒԼԹԱՆՇԱՀ

Երկրորդ տպագրիչ ի Վենետիկ եւ ի Պոլիս 1565—68

Սաֆար՝ որ Հայ լեզուին մէջ Արզար կը կոչուէր, որդին էր Մանդասի Ամիրպէկի և Սենեքարիմ Սերասայոյ փոքր Հայոց թագաւորին սերունդէն, որուն ծննդեան և մանուան թուականը, ինչպէս նաև որո՞ւ աչակերտ ըլլալը թէև յայտնի չէ, պէտք է սակայն իր ժամանակին նշանաւոր գրագէտներէն մէկը եղած ըլլայ, որ «Դպիր» մականունը տուեր է իրեն և մեծամեծ գործեր յանձնուեր է։

Միքայէլ կաթողիկոս Էջմիածնայ մէջ նեղուելով Պարսկայ հարատևարութիւններէն՝ 1562ին առժամապէս Սերասպա իր հայրենիքը կ'երթայ, հոն չատ մը եպիսկոպոսներով, որոնց անունները եաքը պիտի տեսնենք, ժողովը կը գումարէ, և կոչելով Թոխատի Արզար գպիրը՝ իրը նուիրակ Հռոմ կը զրկէ զայն՝ անոր Սուլթանշահ որդւովը և Աղեքսանդր քահանայով միասին, պաշտօն տալով որպէս զի նախ փչեցնեն Ս. Պետրոս առաջին գաչինքը ու առաջին երդմունքը, երկրորդ իմանան Հռոմայեցւոց միտքը թէ՝ ինչ կը խորհին հայոց նկատմամբ, երրորդ որպէս զի յօժարեցնէ զանոնք Հայոց վրայ տարածելու ազգին փրկութեանը։ Զորրորդ միջնորդ ըլլայ Հայոց հայրապետներուն դէպի Հռոմ ճամբորդութեան։ Արզար իր հետ կը տանի միանգամայն միւռոն, ոսկի խաչ, օրհնեալ մատանի և Թէոդորոս վկայի նշխարները ընծայելու համար առ նորին Սրբութիւնն։

Արզար ճամբան երկու տարի կ'ուշանայ, յիշեալ կաթողիկոսն ալ տարի մը եաքը Էջմիածին կը վերադառնայ։ Սակայն երբ Արզարէն բնաւ լուր չառներ, բայի անկէ որ անոր Կիպրոս հասնիլը կը ծանուցանէր, իր Եպիսկոպոսայ

204 — ԱԲԳԱՐ ԴՊԻՐ ԹՈԽԱԹՑԻ

205 — ՍՈՒԼԹԱՆՇԱՀ (ԱԲԳԱՐԻ ՈՐԴԻՆ) *Մարք Անտոն*

հաւանութեամբ միւռոյն իմաստով ուրիշ գիր մը ևս կ'ուղղէ, յիշատակելով անոր մէջ նաև Արգարու նուիրակութիւնն, այդ գիրը Արգարէն առաջ Հռոմ կը հասնի, և որուն բովանդակութիւնը լատիներէն թարգմանուելով՝ Եթովպայի կամ Հնդիկ Մկրտիչ անուն անձէ մը, սակաւ ինչ ծանօթ Հայ լեզուին, Ս. քահանայապետին կը ներկայացուի։ Պիոս Դ. կարդալով այս գիրը՝ Հռոմայ մէջ փնտռել կուտայ Արզարը որ չգըտնուիր, վասն զի դեռ չէր հասած, բայց քիչ եաքը (1564) Արզար կը հասնի իր ընկերներով միասին, և Ս. Քահանայապետէն ընդունուելով կը ներկայացնէ հետը բերած ընծաները և պաշտօնական թուղթերը, որոնց մէջ կային այնպիսի ծածկագիրներ, զորս Արզարը միայն կրնար կարդալ։ Այս ամենուն համար գոհունակութիւն կը յայտնէ նորին Սրբութիւնը, և սիրով կը մեծարէ Արզարը, և անոր հետեւորդները։ Պիոս Դ. նկատի առնելով Արզարին իմաստուն խօսքերը՝ կ'առաջարկէ ի զիր ժառանգել Հայոց դատանանքը։ ան թէև կը հրաժարի այս ձեռնարկէն իր անկարողութիւնը պատճառելով, բայց Ս. Քահանայապետին սարսռանց վրայ կը դիջանի, եւ Աղեքսանդր քահանային ձեռնաւորութեամբ կը պատրաստէ զայն, որ նոյնպէս վերոյիշեալ Միքայէլ կաթողիկոսին՝ Արզարու ձեռքը Ս. Պապին կը ներկայացուի, ուսկից չատ գոհ կը մնայ, եւ ինչան իր գոհունակութեան կը չնորհէ Հայոց Ս. Լուսաւորչի եկեղեցին իրը հիւրանոց Ս. Պետրոս եկեղեցւոյն մօտ, իր ինչքերովը և ժամատունովը միասին. իսկ Արզարու՝ ձեռնտու կը գտնուի Հայկական տպագրութեան գործը գլուխցնելու համար, որ արդէն անոր միտքը գրաւող գործերէն մէկն էր։ Բայց այս ամէն եղելութեանց վրայ ինչ պատասխան արուեցաւ Միքայէլ կաթողիկոսին, Զամչեան Հայոց պատմութեան մէջ կ'ըսէ՝ թէ «անցեալ է, սա ստոյգ է որ այն ժամանակէն եաքը Հռոմայ քահանայապետները միշտ գթալիր աչքով նայեցան Հայ Ազգին վրայ։» Սակայն ինչ որ Զամչեան անցեալ է կ'ըսէ, մենք պիտի յայտնենք զայն հետեւելով Արզարու որդի Սուլթանշահին՝ նուիրակութեան թուականէն 20տարի եաքը ակատնատես վկայութեամբ Հռոմէն գրած նամակին՝ ուղղեալ առ Թադէոս Բ. Էջմիածնայ կաթողիկոսն։ Բայց նախ պիտի յառաջ բերենք այս հնագոյն և միակ նամակին փոքրցուած լուսապատկերը և անոր պատճէնը նոյնութեամբ, ամբողջացնելով միայն պատիւով գրուած բառերը, յատուկ անուանց սկզբնատիրերը գլխատառի վերածելով և սուրբ մակդիրին տեղ լոկ Ս. մը դնելով։ Արզար գպրի նուիրակութեան վրայ լոյս սփռող այս նամակին բնագիրը, թէև աղճատ, խնամքով կը պահուի Անտոնեան Միաբանութեան մատենադարանը յՕրթաքէօյ Կ. Պոլսոյ, որ ձեռագրաց չարքին մէջ կը կրէ ՄԲ թուատառերը և ունի 80×29 սանթիմէթր մեծութիւն։

ՍՈՒԼԹԱՆՇԱՀԻ ՆԱՄԱԿԸ

(Տես թիւ պատկեր 213)

. . . . . .

Զյժժարեցաք զալոյ յամենուն յայս զի... ի կամօք ..... մի ի ձէնջ ոչ յանդգնեցաս իշխել աք ի շաւիղս... ցի զօրհանապազ թէ ուր է Աստուած քո, որ և նոքա ասեն հանապազ թէ ուր է պ.... և որ է բազում պատճառս նուազք և նուազք և ոչինչ են առ՝ազգս մեր..... ի սուտ ..... այր...., ահօրն:...րդ վասն բազում պատճառաց որ նախատանաց և..... նկ... մաղթեմ զի եկեսցէ... զենդիրն իմ իբրև ի վերայ երեսաց իմոց.... բստացիս ոչ միայն ի գահապլեսաց այլ ամենայն դլխաւորաց և ամենայն իշխելոց նոցա Դարձեալ ծանիր..... ցժամանակիս գալս քո և պատճառես զպատճառս որ ոչ են պատճառ։ Այժմ ունկն արա ծառայի.... եկեալ եմ առաջի քո և խոստովան.... յանձն առնեմ քեզ զամենայն, ոչ թէ ի հպարտութիւն զա....իմ յերկինս է որ քննէ զսիրտս և զերիկամունս զի ի ծածուկ է ..... և ի բազմաց լուեալ ես որ մեք... ի Հռոմ. եկեղեցի առնուլ Հայոցն, սպիտակ լինել որ է հիւրանաց, մա....։ Սահմանել և որչափ..... զմանց հնարեմ օգնել և՝ աջողել ազգիս իմոյ վասն Աստուծոյ և հաւատոյ զի ի ազգէ միոջ եմք և ի հօտէ լուսաւորչին... Հայաստանեայցդ։ Եւ մի... խոստովանիմ զի Տեառն փայլութեամբ ունիմ զհոան իմ յաւելուածով ի կեանս իմ ինչս և ստացուածս և հարկս ի Ս. Փափուցն և ի Կարսինարիս Հայոցն և ի ասնս մերոյ՝ վրկ...թենէն, և փառօրել իմ ի յաչս մեծաց և փոքուց բան արժանեաց իմոց, և ոչ թէ կարօտիմ մարմնաւոր մեծութեան և փառաց, այլ տուօղն՝ օր բան օտար կաջողէ ծառային՝ իւրոյ։ Ապա միւս պակասութիւն ունիմ ոչ թէ անձին իմոյ առնել ջանամ այլ բոլոր ազգին իմոյ հակադնեացն. զի որպէս զնաւութիւն ձեր սրբութեան զի ոչ սակաւ ժամանակաց... մերոյ Հայոց ազգիս ժամանեն սատ զի յամենայն՝ երկրէ յոլովմ հայցես սատ կան և որք գնացեալ են և որոց լուեալ եմք թէ՝ գալոց են։ Եպիսկոպոս... նորդք, փարթամք և ազքատք, սին լա և կաղադակէ թէ որդիքս զերի վարեցաւ և ինչս ոչ ունիմ որ թափեմ. սին թէ տուն և բստացուած . . . սին թէ պարտատէր եմ և անօգնական, սին թէ ազքատ և առանց կարեւորի, սին թէ օտարին կողոպտեաց զամենայն ինչս իմ, սին թէ ի ծովուն կործանեցս բազմութիւն ստացուածոց իմոց։ սին թէ եկեղեցի կամիմ շինել, սին թէ անօթս եկեղեցւոյ չունիմք։ Եւ այլ բազում և անչափ. սին գալով որք ընին ի հաւատոց հանեցալ են և խնդրեն ընակութիւն։ Եւ այլք որք վշտացեալ են ի բանութենէ անօրինացն փախչելով անկանելով ատ. և ինձ զսքա զամենայն սիրով և փափաքանօք գիրկ արկանեմ և ի ծոց առնեմ որպէս հովին զոսշինս նորածին և մխիթար լինիմ յդացն որ եկելոց են։ Ապա ոչ կարեմ զսիրտս նոցա և փափաքս նոցա ինչօք և արծաթիւք լցուցանել և յետ դարձուցանել, և ինձ մեծ ամօթ և պակասանս թուի թոյլ տալոյ նոցա անկանել պրանեկդ դուն... մարանալ զի ծառայեալ են այժմ Հայք զերկիրս զայս բանդակ ի ծագէ մինչև ի ծագ. և բազում ևս առասպելս կարծի և անկանին ի բանս և ի գնմանն և ի հեռի աշխարհէ ազազակեն առ ի թէ...։ Որչափ կարն իմ է օգնական լինիմ նոցա կարողութեամբն և գօրութեամբն Աստուծոյ, և այս բանիւն բազում պակասութիւն և ամօթ կու ձգի և տարածի ի վերայ ազգիս Հայկազնոյ։ Եւ ես ի յայս խոր տրամութեանս կամ զօրհանապազ այլ ի յօուր մի թէ վերին ազդեցութիւն էր թէ կամս մտաց իմոց յորդորեաց զիս զի այսպէս՝ պարտ առնել Հայոց ազգիս եկելոցն ատ. զի զկարօտեալս ընչիցն ըստ չափոյն չափոյ առնել արժան իրաւամբք այսպիսի զի ի ձեր սուրբ իշխանութենէդ գայցեն ատ ձեր մատնահարաւն և ձեր ձեռնադրիւն և ձեր վկայութեամբն ատցեն զիւրաքանչիւրդառնայցեն, և որք ընակութիւն խնդրեն ատցից ըստ չափոյ անդս և այգիս և արմատս և ընակեսցեն և ժառանգեսցեն. զի են ատ երիս տունս որդովք և դստերովք և ոչ ունեն քայլոյ մի չափ ժառանգութիւն. և ինձ թէպէտ որ ըստ կարեաց իմոց հովեմ այլ զարժանն ոչ կարեմ առնել. զի ես մի մարդ եմ և աղազակողս առ իս բազումն։ Արդ այսպէս յայտ լիցի բանս այս հօրս մերոյ հոգևորի Պատրիարգ Տէր Թադէոս զի տեղեակ են և գիտակ են ամենայն ազգն Հայոց յերկիրն մեր որպէս ի Թուխտի ի Սեւատի ի Համասիա և այլ բազում տեղիս զոր Եպիսկոպոսքն վկայեն, յորում գտնուն՝ ի տեղոջն իւրում տամք։ ի ժամանակ Միքայէլ կաթողիկոսին որով եկն Սեւատա և արար ժողով բազում Եպիսկոպոսաց և երիցանց և փարթամաց և իմաստնոց հանճարաց, և կոչեցին զՀայրն իմ անդ զՍաֆարն որով Աբգար կոչիւր ի Հայ լեզու։ Եւ էին ի ժողովն եպիսկոպոսանք այսոքիկ, Բարսեղ Աբքեպս Հոխիսիմոյ Վանացն, Սամուէլ Աբքեպս Երուսաղէմացի, Անդրէս Աբքեպս. Պատրիարգ Երուսաղէմայ, Մխիթար Աբքեպս. Էջմիածնի, Քրիստափոր Աբքեպս. ի Վանից Սրբոյ Աննայի և Սրբոցն Կոզմայի և Դամիանոսի, Քրիստափոր Բարձունապետ և Խաչատուր Աբքեպս. և Գրիգոր Վարդապետ և Դաւթար Քահանայ հանճարեղ իմաստնու. ի Սեփասիա Ս. Նշանին, Սահակ Աւագ Երէց, և Գրիգոր և Տօրմաթ մանկաւագունք Սեփասացիք, Յոհաննէս վարդապետ ի Վանացն Սրբոյ Յոհաննու, ուստի է գերեզման Անթափա և Սրբոցն Ստեփանոսի, Յովսէփ Աբքեպս.ի քաղաքէն Պիծաուս ի Ս. Խաչի Վանացն, Աստուածատուրն Աբքեպս. ի Այլի Վանէցն, ուստի է գերեզման Ղուկիանոս Հայրապետին, Պետրոս Եպս. ի Վանացն Սրբոյն Մարտիրոսին, Անդրէաս Աբքեպս.ի Համասիոյ ի Վանէց Վասվասա կուսին, Թադէոս՝ մեծ Բարձունապետն ի Վանէց Ս. Առաքելոցն... իսն Աբքեպս. Բարոյ քաղաքէն, Յոհան Աբքեպս. Անգուրեացի, Յոհան Երեսփոխան Սրբոյն Մեննա և զայլ բազմութիւն ժողովուն անօգուտ համարիմ գրել։ Զի սաքոք քննելով սկիզբ առնելով Հայոց թագաւորութիւն ի խնդրող դաստատակին, և մի բան՝ միոյ ածելով զորդիս որդոց թագաւորացնեա հասուցեալ ի Տրդատ, և ի նմանէ յԱրգար գարձեալ բուռն յարեալ ի գրոցն Ագաթանգղեայ յորդոց որդիս թագաւորացն բերեալ ձգեալ ի Դագիկ ի թագաւորն Կարսոյ, և ի նմանէ գարձեալ յառաջ որոճալով ի բառնալ թագաւորութենէ Հայոց ի խորանացն Սամուէլի և անկանել յեշխանութիւն Պարսից և Հոռոմոց քննելով ստուգաբար ի թագաւորութիւն փաքր Հայոց ի Սենեքարիմ Սեփասացին, և յետ նորա կրկին խափանել թագաւորութեան, և օրենքով զորդիս որդոց նորա հասուցեալ մինչև ի Հայրն իմ ի Աբգար ի որդին Մահդատի Ամիրպէկին, զի վասն այս պատճառաւ եղև այս հանդէս և այս քննութիւնս... ք ի հայրենեաց թագաւորական կտակ, և զայն յայտնել Պատրիարգին Հայոց Միքայէլ կաթողիկոսին, և վասն ոչ հաստատելոյ արար ժողով գրոց և իմաստնոց և քննելով ստուգաբար գտին զորդրգն, զոր և անյարմար համարիմ տալ քում Սրբութեանդ զանուանս մի բան միոյ ի յԱրգարայ մինչ ի մեզ, Արդ երբ ատ գիւ յայտնեցաս բանն, և ի թագաւորացն է գտեալ զազգս մեր, և ժողովն և եպիսկոպոսանքն վկայեցին ճշմարտութեան ի Հոգւոյն Սրբոյ շնորհն, կամ եղև ժողովոյն առաքել զմեզ ի Հռոմ Մորհակս հարցն եւ մի բան



20 Առաջին Հայերէն Օրացոյցը 1565 ԽԱՌՆԱՅՓՆԹՈՒՐ տարի Աբգար Դպիրի պատրաստուած

մինչ կնիք մատնահարին իւրոյ ի վերայ մուրհակացն զոր պատրիարքն իւրոյ ձեռամբ գրեալ և վկայութիւն միահամուռ ժողովրդոյն թէ թագաւորացն է և արժան է սա փառաց և պատուոյ։ Եւ առաքեցին զնոսա ի Հռոմ վասն պատճառաց այսոցիկ. Նախ զի յիշեցուցեալ զառաջին դաշինս և զառաջին երդմունքն. երկրորդ զի... զմիտս Հռոմայեցւոց թէ որպիսի կան ընդ Հայս. երրորդ զի յօժարեցան... ի փրկութիւն վտարանդեալ Հայոցս. Չորրորդ միջնորդ լինել և ճանապարհներդել հայրապետացն մեր ի Հռոմ։ Արդ այս բանիս հասեալ մեզ ի Հռոմ թարգմանեալ զդիրս և զմուրհակս և յայտնի կացուցեալ Ս. փափուն և իբրև տեսեալ Ս. Փապն փիսա ի մեծ ցնծութիւն լեալ և արար համագումար հանդէս և առաջի խուռն ամբոխին համբուրեալ զերեսս հօր իմոյ ասելով թէ ի Հայոց թագաւորն գալ ոմն մի։ Եւ հանուրց ցնծութեամբ և ուրախութեամբ խոյտուրդ արարեալ Ս. Փապն Առաքել զհայրն իմ ի յետս ասելով ցհայրն իմ, թէ նմանէ թագաւորացն եկիր առ իս, և այժմ փառաւորեալ իբր արքա առաքեմ զքեզ առ պատրիարքն զի բերցես զնա առ մեզ, զի իմ բերան բերան խօսելով իմացից զանցս Հայոցն. զի զոս եղեր մինչնորդ ընդ... ընդ Հայս։ Եւ զիս Ս. Փապն արքեդիր առնելով իւրն, և ոչ թողուլ ընդ հօրն իմ ի պատճառս ի յետ չոքելոյ հօրն իմոյ ի Հայոց։ Եւ... բաս... հօրն իմոյ նորընծա Եպիսկոպոս ոմն ... եաց վասն զի գիտելով փոքր ի շատէ ի լեզուաց աշխարհին մերոյ, և բազում ընչիւք և պարգևօք յուղի անգեալ գալով ի Հայս, և հասեալ ի քաղաքն Վէնէտիկ և զնպասկոպոսն ընձայիւք յառաջ խաղացուցեալ քան զնէն ի Կիպրոս զի կացցէ և ապաստեցէ գալոյ հօրն իմոյ, և փերին կամակցութեամբ հիւանդացեալ անա Եպիսկոպոսին և ոչ սակաւուրք անցեալ վախճանի և դարձուցեալ զընձայս ի Հռոմ և հօր իմոյ լուեալ զայս, յերկու կողմանց յուսահատեալ. մինն զի Եպիսկոպոսն վախճանեալ որ ընկերակից էր և միսն որ պարգևքն դարձան ի Հռոմ առանց իւր հրամանացն. և մինչդեռ ի յայս տարակուսանս էր, լուեալ այլ իմն համբաւ թէ տաճկունքն լուեալ են զ... և նա այլ հնարս ոչ կարէր առնել, հնարեցաւ և արար զպատան գրոց և յուղի անգեալ անցեալ ի Կոստանդինուպօլիս... Նօրինացն թէ վասն այս պատճառս գնացեալ եմ ի Ֆռանգիստան վասն ահի և երկիւղին, և ամենայն ինչ վասն չկամելո Աստուծոյ ունայն և սնոտի եղեն։ Եւ ես ասա սնս ի գալստեանս առ ձեռամբ հղաւ կարտինարաց և ամենայն գալուութեան Լատինացւոց ... առաջի վեհ և երևելի Սանթասէվերինա կարտինարին, որ է առաջիկա Ս. Փապն ԺԴ Գրիգորին. եւ... և վասն գալոյ նորա ի Հռոմ և գտեալ սակս ի գրանց նորա և զ վկայութիւն որ վկայեալ էին թէ թագաւորաց...լով զայս ասուգեաց և յայտնեաց Ս. Փապն, և Փապն կամեցաւ տալ ինձ ժառանգութիւն իբր կամ զքաղաքս կամ զերդս և...լով իբր թէ նոր իմն վկայութիւն խնդրելով ի Հայոցն։ Եւ ոչ թէ ինձէն ժառանգութեան փափաքիմ, այլ ըստ վերդրելոցն որ վասն Հայոց... զայս վասն այս պատճառաց առաքեցի զայս սիրելին իմ և խորհրդակիցն իմ առ հոգևոր Ս. Հայրութիւնդ քո զի զայսմանէ լաւն արացես ինձ, զի ձեռամբ քով գրեսցես նոմայ վկայութիւն առաջի գրոյն որպէս ասա ընթեռնուս, և կնքեսցես զնա կնքաւ քո, եւ թէ հնար է մինչև քսան Եպիսկոպոսունք կնքելով և ձեռնադիս առնել ի նոմայս զոր հայրդ Սուքը ինձ չնորհէ, և զփափաք իմ ի քէն... ալ կամիմ այնպէս արասցես. Տէրն վկա լիցի այսմ բանիցս, զի խնամս Ս. Փապին ամ յամի անպակաս պահել հոգա... ի Ս. Էջմիածնէն և ի... նորա։ Եւ դարձեալ թէ ոչ վասն իմ փափաքիմ, այլ վասն Հայոց երեց պատճառս նախ զի ամենայն կարօտեալս որ գան առ իս ընակեցուցից զեկեղեցիս Հայոց և բարձրացուցից... ի մէջ ազգիս այս և կացցեն ի յօտնդս հարցն իւրեանց... որպէս... յաւիտենական, և մի ոք յազգիս յայսմանէ... ցուցանէ և մի այլայլէ զնոսա, երրորդ զի յօրժամ այս ամենայն լինի հուչակի և տարածի արարմունք Հայոցն յամենայն ամենայնի, կարացից համարձակեցայց հանապազօր յետս և ի մուտս առ Ս. Հայրն Փապն և առ հզօր կարտինարքն և զգուշացուցանել... նել զառաջին երդումն և դաշինքն և յօժարեցուցանել զնոսա օր ըստ օրէ գալ նոցա ի փրկութիւն Սրբոյն Սիոնի որպէս հարքն իմով ոչ եղև, մաղթեմ և հայցեմ յԱստուծոյ զի ձեռամբ իմով եղիցի։ Եւ զոս Հայր իմ հոգևոր Տէր Թադէոս Պատրիարգ յօժարիւ որպէս որդոյ հարազատոյ արացես ստուգութեամբ և հանճարիւ և առընթեր նամակին գնելով զկնիքս միահամուռ Եպիսկոպոսացն և զմատունս իւրեանց ի ներքոյ կնքոյն, և խոստովանարար ... և մի իբրև արակ... և փոյթ առ փոյթ կատարեսցես և դարձուսցես զպատգամսոր... զի զոյթ հայրութեանդ տեսից ծառայս և հոգևոր որդիս քո զի քեզ եղէց անգիւնաքար ի մէջ Հռոմայ և ի մէջ...։ Եւ յետ այսոց կատարելոց թէ՝մի ի սպասողաց հօրդ հոգևորի ժամանեսցէ առաս առ ի խնդիրս ինչ տեսցէ... և քո գալստեանդ նայէի զի հարց սուրբ... ի քէն իսկ վկայիր բերան առ բերան և հաստատիր ձեռամբ քով և... բազկս քով սրբով.. եւ դէր եւս այսպէս ակն ունիմ, և թէ ի ժամանակիս չունի փառաւորութիւնդ կամք ժամանելոյ առաս, որպէս ես ի խնդիրս է՝մերոյ՝Հայոցս Պարոն Կարտինարին՝զորոյ զնմ... ի դարձ պատասխանուս թղթիս ինձ թէ... պատրաստութիւն առնեմ Սրբութեանդ և կամ... քեզ կամ ճանապարհաւ գալոյց ես, զի առաքեցից ամենայն...հրաման կարտինարին, զի յո՞ր քաղաք հանդիպեսցի Սրբութիւնդ քո, ըստ արժանեացն... ի քաղաք, ի թագաւորեառ թագաւոր մինչև մտաւան լեցիս՝մեզ, ապա մի ի սպասողացդ առաքես, որ՝ես ամբոխիս՝ ըստ արժանի՝ եղանել առաջի և զօրինաւորն առնեմ զի ծանիցեն,...թէ մարդկան ... վեհ խաստութեանդ Հայր իմ՝Հոգևոր՝ Տէր Թադէոս Պատրիարգ Հայոց։

Գրեցաւ ի Թուականութիւն Հայոց ՌԾԱՅ ի ՌԼԲ ի Մեծն Հռոմ ի գրուն գլխաւոր Առաքելոցն Պետրոսի եւ Պօղոսի ձեռամբ Հոկտեմբեր իա օրն շաբաթի օր։

Վերատացեալ
Մեղաւոր
ՍՈՒԼԹԱՆՇԱՀ ՄԱՐԳԱՆՑՈՆԷՍ

Արդար՝ իր Հռոմ գացած միջոցին իր հետ տարած էր նաև իր որդին Սուլդանշահ, ուր՝ որդեգրուեցաւ Պիոս Դ. Պապէն և կոչուեցաւ Մարգանտոն։ Սուլդանշահ հոն սորվեցաւ Լատիներէն և կոչուեցաւ անտեսութեան վերակացու պաշտօնին. իր միջոցաւ բազմաթիւ Հայեր օգնութիւն գտած են։ 1583ին նամակ մը ուղարկած է Թադէոս կաթողիկոսին (տես պատկեր) որուն մէջ սառարգիրը կը պատմէ նախ՝ թէ ինչ պարագաներու մէջ իր հայրը ընդունած էր Միքայէլ կաթողիկոսի նուիրակութիւնը, գործին և ճամբու դժուարութիւնները, անանկ որ, կ'ըսէ, ոչ ոք կը յանդգնէր յանձնառու լլալ։ Ապա կը նկարագրէ իր ազգայնոց դիրքը Հռոմայ մէջ, և կ'աւելցնէ թէ զոս չատերէն լսած են հարկաւ որ մենք Հռոմայ մէջ առաքեցինք եկեղեցի և Սպիտալ՝ որ է հիւրանոց։ Կը խոստովանիմ, կ'ըսէ, թէ Աստուծոյ զօրութեամբ ունիմ ինչք և ստացուածք և ուօճիկ ի Ս. Փափէն և Հայոց Կարտինարէն և մեր ատ-



207 — Սաղմոսարանին՝առաջին էջը

վերակացութենէն և ամենուն սիրելի։ Ես ո՛և է կարօտութիւն չունիմ, բայց ոչ նոյնպէս իմ ազգայինքս, որ հոս եկած են ամէն կողմէն և ամէն ինչքէ զուրկ, Եպիսկոպոս, Առաջնորդ, հարուստ և աղքատ ամենքը իրենց զանազան թշուառութիւնները կը պատմեն ու կուլան, և ես ասոնց ամենքը, ինչպէս հովիւ մը նորածին գառնուկները, ծոցիս մէջ կը պատապարեմ, կը մ'ղեմարեմ, բայց և այնպէս չեմ կրնար ամենքս փափաքը լեցնել, և ընչիք և արծաթիւք ետ դարձնել, և ինձ մեծ ամօթ կը թուի թոյլ տալ անոնց զուտէ զուտ չրջիլ և մուրալ։ Այժմ Հայերը այս երկրին ամէն կողմը տարածուած են, և չատ տեղ իրենց վիճակը առատպէլ կարծուելով՝ բանտերու և զնտաններու մէջ կը նետուին, եւ հետուէն ինձ կը գիմեն որ զիրենք ազատեմ։ Օր մը մինչ ի խոր արտասուքեան կը խորհէի թէ այս վիճակը ամօթաբեր է Ազգիս. ինքնարերաբար թէ վերնայն ազդեցութեամբ, չգիտեմ, յանկարծ հետուեալը ինկաւ միտքս որ ասկէ ետքը հոս եկող կարօտեալները Ս. Իշխանութենէդ մատնատար, ձեռնադիր և վկայութիւն առնելով գան, և բան չտիս արժանեայ իւրաքանչիւրը իր նպատակ առնէ և ետ դառնայ։ Իսկ ասոնց որ բնակութիւն կը խնդրեն անդատան, այդի և արմատք կուտամ, որպէս զի բնակին և ժառանգեն։ Հոս երեք տուն կայ, որդւովք և դստերօք, որոնք քայլ մը անգամ երկիր չունին, և ես թէև բան իմ կարգութեանս կը հոգամ զանոնք, բայց ոչ լաւ արժանւոյն. վասն զի ես մէկ մարդ եմ, բայց ինծի գիմողները չատ։ Այս ամէնը թող յայտնի լլայ մեր Հոգևոր Հօրը Պատրիարգ Տէր Թադէոսին։ Ինչպէս որ բոլոր Հայ Ազգը տեղեակ է, մեր երկրին մէջ, որպիսի է Թուրքի, Սատի և Համասիա և ուրիշ չատ տեղեր, ինչ որ Եպիսկոպոսներն ալ կը վկայեն, որոնց տուներները արդէն վերը յիշատակեցինք, որք լսա հրաւիրանաց Միքայէլ Կաթողիկոսին ժողով գումարելով ի Սեւասիա, կոչեցին իմ հայրս Սաֆալը որ է Արզար, և անոր ազգատութիւնը մատրաստնին խուզարկութեամբ քննելով՝ հաստատեցին թէ թագաւորացն է, բոլոր ժողովական հարց սառարգրութեամբք և Միքայէլ Կաթողիկոսին կնքով վաւերացեալ վկայագիր մը տալով հօրս ձեռքը՝ Հռոմ գրկեցին յետագայ պատճառներուն համար։ Նախ թէ յիշեցնէ առաջին դաշինքը և երդումը. երկրորդ՝ թէ Հռոմայեցւոց միաբան իմանայ Հայոց նկատմամբ. երրորդ՝ թէ յօժարեցնէ զանոնք

վարանդեալ Հայոց փրկութեան համար. չորրորդ՝ թէ միջնորդ ըլլայ մեր հայրապետաց դէպի Հռոմ ճամբորդելուն համար։ Արդ երբ Հռոմ հասանք, թարգմանեցին մեր գիրերը և մուրհակները եւ Ս. Փափին ներկայացուցին, զոր սեսնալով ցընծութեամբ ընդունեցաւ, և խուսն բազմութեան առջեւ համբուրեց հօր երեսները ըսելով՝ թէ գայ մէկը Հայոց թագաւորազններէն, և ժողովքով որոշեց զրկել չսա մը ընծաներով Հայ լեզուին քիչ ծանօթ նորընծայ եպիսկոպոս մը փոխադարձ նուիրակ հօրս հետ, որուն հրաժեշտին սահն բնաւ թէ՝ իբրև թագաւոր եկար հոս և ես զքեզ իբրև արքայ փառաւորելով կը յուզարկեմ Պարիարգին, որպէս զի զայն հոս բերես և բերան առ բերան խօսելով իմանանք Հայոց ցաւերը։ Որով հայրս ճամբայ կ'ելլայ նուիրակ եպիսկոպոսով միասին և Վենետիկ հասնելով իր ուղղիցը Կիպրոս կը զրկէ յանձնարարելով հոն իրեն սպասել։ Փափին նուիրակը հոգիւ թէ Կիպրոս կը հասնի, սակաւօրեայ հիւանդութեամբ կը վախճանի, նուէրներն ալ եւ կը զրկուին, զոր լսելով հայրս յոյժ կը նեղայ։ Նայ առանց իր հրամանին զրկելնուն համար։ Այս պարագաներուն մէջ կը լսէ միանգամայն որ Տաճիկները իրագէկ եղեր են իր նպատակին, զրկին եւ կը նեղանայ, վասն զի մտադիր էր Կ. Պոլիս անցնիլ, ուստի հնարք մը կը խորհի։ Կ'որոշէ գիրք մը տալ տալ (հայերէն սաղմոս մը, որուն գիրերուն մայրերը արդէն ի Հռոմ շինել տուած էր Փիոս Դ. փափին ձեռնտուութեամբ, ինչպէս յայտնի է յիշատակարաններէն.) որպէս զի ի պանու՝ հարկին կարենայ ըսել թէ ա՛հա ես սոսոց համար կը շրջիմ ի Ֆռանգիստան։ Իսկ զիս Ս. Փափը որդեգրելով իր քովը պահեց, նա մանաւանդ որ հայրս պիտի վերադառնար, որով ես հոս հզօր Կարտինարներու ձեռաց ներքև ուսայ լատին դպրութիւնը, ի մասնաւորի վեհ և երեւելի Սանթասէվերինա Կարտինարին, առաջնիկայ Ս. փափին Գրիգոր ԺԳ. ի (յաջորդ Պիոս Դ. ի և Ե. ի) որ նորին Սրբութեան իմացուց հօրս ի Հռոմ գալուստը, և անոր վկայագիրները զորս անբաւական գտած էր, Սանթասէվերինան համոզցուց Ս. փափն հօրս թագաւորազուն ըլլալուն վրայ, և նա ուզեց տալ ինձ քաղաքներ և բերդեր ի ժառանգութիւն, եթէ միւնոյն իմաստով վկայագիր մ'ալ ինձ համար բերել տամ Ազգէն։ Տէրը վկայ ըլլայ որ միշտ կը ջանայ տարուէ տարի աւելցնել Փափին խնամքը էջմիածնայ վրայ։ Ուստի կը դիմեմ Սրբութեանդ որ վկայագիր մը զրկես ինձի իբրև հարազատ որդւոյ, ինչ որ հօրս տուեր էիր, խոստովանաբար (ծածկարար) գրուած, որուն սկիզբը և վերջը ըլլայ այն ձեւով որ հոս կը կարդաք և վաւերացեալ գտնէ քսան Եպիսկոպոսաց ձեռնադրով և մատնահարիւ և կաթողիկոսական կնքաւոր։ Երբ այս ամէնը կատարուի, ամենուրեք կը տարածուի Հայոց զորձերը, և ես համարձակ մուտք

ԻԹՎԱԿԱՆԻս·ՀԱՅՈՑ·Ռ·Մ·Դ·
ԱՄԻՆԵՍԹՈՒԱԹ ՑԻԱԲԳԱՐԴԱԿԻՐՍ
ԻՆԴՐԵՑԻ ԶԱՅՍՆՈՐԳԻՐՍ·ԻՀՌՈՄ
ԻՊԵՏՈՒՈՍ ՓԱՓՈՒՆ ՀԵՐԵՏ ՀՐԱՄ
ԱՆՇԻՆԵԼՈՒ·ԲԱՐԵԽԱՒՍՈՒԹԲ
ԱՅՍԿԱՐՍՈ ԻՍԱԼԱՑՍԼԱՅՍ·ԵՊԿՊԻՍ·
ԵՒՄԳՐԱՅՄԻՍ ՍՈՒՏԱՆՇԱՅՈՐԴՈՅՍ

208 Արդար և իր որդին Պապին կը ներկայանան
(Սարնուսարանին էջ մը)

և ելք կանենամ Ս. փափին և Կարտինարաց քով, զորս գուցէ օր ըստ օրէ յօժարեցնեմ օգնելու Սիոնի փրկութեան, և ինչ որ հօրս ձեռքով չեղաւ, կը մաղթեմ Աստուծմէ որ գտնէ իմ ձեռօքս ըլլայ։ Այս ամէնը կը փափաքիմ ոչ իմ օգտիս համար, այլ կարօտեալ ազգայնոցս, որպէս զի կարենամ անոնց ընակութիւն տալ ի պարագային որ հոս գան, և անոնց համար Եկեղեցիներ կանգնել, որ Ազգիս մէջ մնան յաւիտենական յիշատակ, և ոչ ոք կարենայ եղծանել կամ այլայլել։ Այս ամէնը փութով կատարէիր և պատգամաւորը չուտով դարձնէիր, որպէս զի անկիւնաքար մ'ըլլամ Հռոմայ և Հայոց մէջ։ Սակայն լաւագոյն կ'ըլլար եթէ զՍ. Հայրդ հոս տեսնէի որ բերան առ բերան վկայէիր և ձեռքովդ հաստատէիր, և ես այսպէս յուսամ, որպէս և Հայոց Պարոն Կարտինարին խնդիրքն ալ այս է։ Ուստի թղթիս պատասխանովը ծանուցանես ինձ՝ թէ ինչ ճամբով պիտի ըլլայ քու գալուստդ, որ ըստ այնմ պատրաստութիւն տեսնեմ Սրբութեանդ և Կարտինարին հրամանները զրկեմ, որպէս զի ամ քաղաք որ հանդիպիս, ըստ արժանւոյն բերեն զՍ. Հայրդ քաղաք քաղաք, թագաւորէ թագաւոր։ Եւ երբ մեզի կը մօտենաս, սպասաւորներդ մէկը կը զրկես, որ ըստ արժանւոյն առջեւնդ ելլեմ ամբոխիս և օրինաւոր ընդունելութիւն ընեմ, որպէս զի իմանան որ այսպէս վայել է թէ մարդկանց և թէ վեհ իմաստութեանդ, Հայր իմ հոգեւոր, Տէր Թադէոս պատրիարգ Հայոց։

Սոյն գիրը թուի թէ չէ հասած իր հասցէին, Թադէոս կաթողիկոսին մատուան պատճառաւ որով ցարդ կը մնայ Օրթազիւղ Աստանեան Մխիթարեանութեան Մատենադարանը։

Հետեւեալ տարին 1584 գործակցութեամբ Յով. Տէրզնցիի հրատարակած է Գրիգորեան տումարը «Տումար Գրիգորեան, յաւիտենականն։ Որ եղեւ յիշխանութեան հզօր Սրբոյ Փափայն և այլ թագաւորացն։ Կազմեցաւ ի մեծն Հռովմէն. ի քաղաքն Սրբոց Առաքելոցն ի թուի ՌՇԶԴ (1584) Romæ ex typographia Dominici Bosæ»

Երբ Արդար դպիր իր պաշտօնական թղթոց թարգմանութիւնները կը ներկայացնէ, Պիոս Դ. չատ գոհ կը մնայ, և կը համբուրէ Արդարին երեսը ըսելով՝ թէ գայ մէկը Հայոց թագաւորազուններէն, և ժողովքով կ'որոշէ նորընծայ եպիսկոպոս մը, փոքր ինչ տեղեակ Հայ լեզուին, չատ մը ընծաներով փոխադարձ նուիրակ զրկել Արդարու հետ, որուն հրաժեշտին օրը կ'ըսէ՝ թէ իբրև թագաւորազն եկար հոս, և ես զքեզ իբրև արքայ փառաւորելով կը յուզարկեմ Պարիարգին որպէս զի զնդը հոս բերես բերան առ բերան խօսելու և իմանալու համար Հայոց ցաւերը։ Իսկ Սուլդանչարը կ'որդեգրէ և իր քովը կը պահէ, մանաւանդ որ իր հայրն ալ պիտի վերադառնար։ Որդեգրութեան անունն ալ կը կոչէ, թագաւորազն ըլլալուն պատճառաւ, Հռոմայ Եռապետաց միոյն անունովը Marcus Antonius (Մարգանտոն) որուն ոսկիկ մը ևս կը կապէ, և կը կարգէ զայն Հռոմայ Հայ ազգայնոց վերակացու։ Ասի կ'ասի զրագիլ Լատին դպրութեամբ, հայրն ալ պատրաստ նուիրակին ընկերակցութեամբ ճամբայ կ'ելլայ դէպի Հայաստան։ Վենետիկ հասնելով՝ Արդար իր ուղղիցը Կիպրոս կ'ուղարկէ և հոն իրեն սպասել կը յանձնարարէ, սակայն մինչ ինք կ'զրաղէր ապարանքի մը կազմակերպութեան անհրաժեշտ պիտոյքները լրացնելու, նուիրակը հոգիւ Կիպրոս հասած, սակաւօրեայ հիւանդութեամբ կը վախճանի, ընծաներն ալ Հռոմ եւ կը զրկուին, այս բանը լսելով Արդար սաստիկ կը նեղանայ մանաւանդ առանց իր հրամանին ընծաներուն եւ զրկուելնուն համար։ Այս պարագաներուն մէջ կը լսէ նաև որ Տաճիկները իրազեկ եղեր են իր նպատակին, որով աւելի ևս կը նեղանայ. վասն զի մտադիր էր Կ. Պոլիս անցնիլ, ուստի ուրիշ հնարք մը կը խորհի, կ'որոշէ Վենետիկի մէջ իսկ տպագրել հայերէն գրքեր և այդ պատրուակին տակ պահել իր բուն նպատակը. ուստի կը տպագրէ 1565 ին Խառնափնթար անունով տումար մը միտերի 56×46 սանթիմէթր մեծութեամբ և Սաղմոս։ (Տես թիւ. 207—211։

Արդար Սաղմոսէն առաջ տպած է Հայերէն առաջին օրացոյցը Խառնափնթար անունով։ (Տես Պատկեր Թ.206)

Արդար 1568ին իր տպագրական բոլոր կազմածներով կ'անցնի Պոլիս, և թէև չէ սուզուած, սակայն կ'բաւի թէ հոն կը ձերբակալուի ու կը բանտարկուի և սակայն ապացուցանելով իր անմեղութիւնը, կը հաստատուի Բէգիէլի թաղ Ս. Նիկողոս եկեղեցին ուր կը կազմակերպէ իր տպարանը և կը տպագրէ Տօնացոյց, Տաղարան, Ժամագիրք, Պատարագամատոյց, Մաշտոց։ Ճէվահիրճեան Մաղաքիա դպիրի ձեռագիր ժամանակագրութիւնը կը հաստատէ այս պարագայն հետեւեալ կերպով «ՌԺԶ (1567) ի հայրապետութեան Հայոց Տեառն Միքայելի ԻԱ. ամի կաթողիկոսութեանն, ի մայրաքաղաքն Կ. Պոլիս, յերկրորդի ամի թագաւորութեանն Օսմանցւոց Սուլթան Սէլիմի, և ի չորրորդ ամի պարիարքութեան Տէր Յակոբ Բարունտպետի Կ. Պոլսոյ առ սոսա Յովհաննէս եպիսկոպոսին ընդ Յովանեաւ Ս. Նիկողայոս եկեղեցւոյն Հայոց՝ եղև բատմփայ, այսինքն պատմագիր և տպեցաւ փոքր քերականութիւն տպայոց, ձեռամբ անարժան

կնքագիր գպրի մերս Յաղորին» Ռ.Ժ.Է (1568) ի Կ. Պոլիս նոր ատամիայ գիր սահմանեցին ի հայրապետութեան Տեառն Միքայելին Էջմիածնի և ի պատրիարգութեան Կ. Պոլսոյ Տէր Յակոբի ընդ Յովհաննէս Ս. Նիկողայոս եկեղեցւոյն, ձեռամբ Խոր վիրապի Առաքեալ Աբեղային աբեղապետութեամբ Աբգար գպրին և իւր Թադարամ Անտոնիոս Սուլթան Սարկաւագին, որոյ գրվքն ապեալ ածուցոյցս յառաջ բերին»:

Իր տպագրած գրերը.— խառնափնթոր տարբեր 1565 Վենետիկ Սաղմոս (1565-66) Վենետիկ. Տնտայոյց, Տպարան, Ժամագիրք. Պատարագամատոյց Կ. Պոլիս (1568)



Ե - եկեալ ի գեղեցիկ նաւայ Հանկիտ. մայրայ քաղաքն. որ կոչի վանատիկ. ի թագաւորութեն Երեմեան. թուականին
Ե՝ շինեցաք զայսմ որգիրս. ձեռամբ մեկնիչս սաղմոսացս.

209, Աբգար Գպիր Վենետիկի գաւառին կը ներկայանայ (Սաղմոսին էջ մը)

Աբգար Գպիրն կ'անցնի Էջմիածին (1569) Մի քանի կամոպոլիսին քով ուրիշ վերջ իր ո՞ւր և ի՞նչ ըլլալու մասին ոչ և է ծանօթութիւն կը պակսի:

***

Զարդարեան Վանան Հայկական տպագրութեան մերձակայ չորրորդ հարիւրամեակին առթիւ ազգային նշանաւոր անձանց վրայ Յիշատակարանի մը պարբերաբար հրատարակութեան կը ձեռնարկէ: Զարգարեան 1910 Յունիս 3ին այցելեց մեր Մատենադարանը, ուսկից ոչ սակաւ կարեւոր նիւթեր փոխադրեց իր ազգօգուտ երկասիրութեան: Ի մէջ այլոց ցոյց տուինք իրեն նաեւ Սուլթանչահի նամակը, որուն վրայ իր հիացումը յայտնելէ զկնի՝ հարցուց թէ Աբգար գպրի պատկերը ունի՞ք.— պատասխանեցինք՝ ոչ, բայց կրնանք հայթայթել, միշեցնելով Սուլթանչահի և անոր հօրը գէմքերը Աբգարաւ Սաղմոսին մէջ, որմէ օրինակ մը կը գտնուի Միլան Ամբրոսիոսեան Մատենադարանը,— Զարգարեան կանխիկ շնորհակալութեամբ յանձնարարեց մեզի բերել սալ այն գէմքերուն լնական մեծութեամբ լուսանկարները: Եւ լսա լսա այսմ միշեալ մատենադարանին Տնօրէնին հետ յեսադայ թղթակցութիւնը ունեցանք:

***

Անուանեան Կոստանդնուպոլիս Օրբա Էջ
Միաբանութիւն *19 Յուլիս 1910*
Թիւ.
Նիւթ
Խուզարկումն մատենագրական

Հնախօս ճանապարհորդի մը ծանօթութեանց հետեւանքով գիտենք որ Ամբրոսիոսեան մատենադարանը ունի Հայերեն Սաղմոս մը, տիպ Վենետեան ի 1565, որուն մէջ կան երկու պատկերներ: Առաջինը կը ներկայացնէ 7 անձանց խումբ մը, որոնց մէջտեղը Պիոս Դ ձախ ձեռքին մէջ ունենալով փախանները՝ աջովը կ'օրհնէ ծնրադիր Աբգարը, երկրորդ աշխատող Հայիսկան Տպագրութեան գիտին համար, որ ձեռաց մէջ ունի միանգամայն Հայերեն տառերուն մայրերը, գրս փորագրեալ տուած է ի Հռոմ: Երկրորդ պատկերը կը ներկայացնէ Վենետկոյ դուքը իր խորհրդականներուն մէջ որ զԱբգարը կ'ընդունի: Արդ այս գրութեամբ կուգանք խնդրել Ձեր բարեացակամութենէն որ այս պատկերաց բնաւրան մեծութեամբ լուսանկարները դրկել բարեհաճիք: Բաց ասկէ կը խնդրուի նաեւ մի եւ նոյն մեծութեամբ այս գիրքին ճակտին լուսանկարը, ինչպես եւ հոի մը՝ որ Սաղմոսի մը սկիզբը պարունակէ: Իրաւանցիր լուսանկարներն մեկ օրինակ միայն բաւական է: Այս ամենը պիտի գնեցուցին երկի մը մէջ, որ է Յիշատակարան Դ հարիւրամեակի Հայկական Տպագրութեան»:

Այս գործին գինին համար, զոր չենք կարծեր որ շատ սուղ ըլլայ, շնորհք ընեիք մեզի հաղորդման կերպ մը ցոյց տալ, եւ աղաչելով ընդունիլ մեր կանխիկ շնորհակալիքը՝ պատիւ ունիմ ստորագրելու:

Պատուարժան Տեառնդ
Խ. Ծ

Հ. Բաբիկ Վ. Սրապեան
Քարտուղար Անուանեան Միաբանութեան

Առ պատուարժան Տ. Ամիլլէ Բաբրի
Վերակացու Ամբրոսիոսեան Մատենադարանի
Միլան

***

Միլան Ամբրոսիոսեան Մատենադարան
29 Յուլիս 1910

Գերյարգոյ Հայր

Պատասխանելով Ձեր անցեալ ամսոյ 19 յարգոյ գրութեան՝ պիտի ըսեմ Ձեզի՝ թեւ կայ հոս Ձեր նշանակած գիրքը, բայց անանուն Հնախօսին տրուած նշանները բաւական չեն զայն գտնելու, ինչպէս խուզարկումներ որ ըլլան մեր ցուցակներուն մէջ:

Կ'սպասեմ ուրեմն աւելի օգտակար նշաններու եւ աւելի բարեդէպ առիթներու եւ բոլոր սրտիս յանձնարարելով զիս:

Տ. Ամիլլէ Վ. Ռաբրի
Վերակացու Ամբրոսիոսեան մատենադարանի

Առ Գերյ. Հ. **Բաբիկ Վ. Սրապեան**
Քարտուղար Անս. Միաբանութեան
Կոստանդնուպոլիս

***

Անուանեան Կոստանդնուպոլիս Օրբա Էջ
Միաբանութիւն *30 Օգոստոս 1910*
Թիւ
Նիւթ
Խուզարկումն Մատենագրական

Գերյարգոյ Տէր

Ձեր Յուլիս 29 յարգոյ գրութեամբ ուրիշ նշաններ կը խնդրուին բաւական չըլլալով Յուլիս 19 նամակաս տուածներս, փնտռելու համար Ամբրոսիոսեան մատենադարանին մէջ հայերեն Սաղմոսը, տպեալ ի Վենետիկ 1565: Արդ Գերյ. Հ. Գրիգորիս Ծ. Վ. Գալեմքեարեան, Մխիթարեան Վիեննայ, իր կրկին խնդրանացս վրայ կը յաւելու որ խնդրոյ ներքեւ եղած սաղմոսը ունիր մեծութիւն 15 × 10, կազմ՝ կաշի, գոյն՝ շագանակի եւ էր սմանդիպակս պանուած որ ցոյց տուեցաւ ինծի Տէր Ղուսիէն, մատենադարանապետ ժամանակին: Յուսամ որ այսման նշաններ բաւական են գտնելու դիտեալ գրքոյկը եւ հետաքրքրուելու գործին, որուն համար տնտեսման աղաչեր էի նախընթացիս մէջ.

Կանխիկ շնորհակալութիւն կը խոստովանիմ ձեզմէ

Գերյ. Տէրութեանդ
Խ. Ծ.

Հ. Բաբիկ Վ. Սրապեան
Քարտուղար

Տ. Ա. Ռաբրի
Միլան

առք անբաժ անելի և միանական սրբերորդ դուռթ Հաւրեւորդոյն Հոգոյնսրբոյ յաւիտեանս ամ մեն:
Կ ազմեցաւ սրբերգարանս դաւթի լաւ Հայրնդիր աւրինակն գառնեց ոյ վարդապետի:
Ի թվականիս Հայոց ռժ ե. մայիս ժ ե. աւրն ուրբաթ ժ բ ժամն:
Ա ռոտս. Մելքիսեթեկ եպիսկոպոսին. ի մայրայ քաղաքն Վանա տիկ ընդ Հովհանեաւ սրբ մարկոս աւ

210 Սաղմոսարանի յիշատակարան (Վերջինիներ էջ)

Միլան, Ամբրոսիոսեան Մատենադարան
20 Օգոստոս 1910

Գերյարգոյ Հայր

Կը գրեմ որ ծանօթ գրքոյկը ցոյց տրուած է Տ. Ռուսի Վ.ին մատենադարանապետ ժամանակին: Ամբրոսիոսեան մատենադարանը իր գոյութե-

նեն ի վեր չունեցաւ երբեմ այս անուամբ մատենադարանապետ մը. ուրեմն խօսքը հաւանօրէն կը յածի ուրիշ Մատենադարանի մը վրայ:

Յարգանօք կը յանձնարարեմ զիս Ձեզի

Խ. Ծ.

Կ. Պոլիս Օրթաքէօյ, 30 Օգոստոս 1910

Գերյարգոյ Տէր

Ի վայրկենիս որ ներկայս կը գրեմ, ունիմ ի ձեռին Ձեր 20 Օգոստոս յարգոյ գրութիւնը, որով կը ծանուցանէք թէ «Ամբրոսիական Մատենադարանը իր գոյութենէն ի վեր այս անունով Մատենադարանապետ մը չունեցաւ երբեմ. ուրեմն խօսքը հաւանօրէն ուրիշ Մատենադարանի մը վրայ կը յածի»:

Եւ ահա՝ չէին: Ի Հայոց Հոգեւոր Տունն:
Իժ ամանակ սիմովնի:
Յ Իշեցեք Իմաքբայփայլ աղաւթս
Ձեր զաշխատութիւնս սորայզառաջի
Ղ Ք զմիջինք Հզվերինքն Հաճ յիշե
Ղ Ձեզ ի ուրմիւսանկամ գալուստն
Ամ մեն
Բ Ճ Հ Բ: Թուխեհա մենանկոխածեւ
Հիսկիդչիդերչկայիգիրքսբաւե:

211, Սաղմոսարանի յիշատակարան վերջին էջ

Պարբերութեանս առաջին կէտին համար, եւրոպի ինձ խորհրդածել, որ բացի Մատենադարանապետին անունեն ուրիշ նշաններ եւս տրուած էին, որով շաւագոյն չէ՞ր արդեօք անունցմէ յաւէս օգտուիլ: Ինչի՞ կը ծառայէ Ժամանակին Մատենադարանապետին անունը եթէ կոչուի Թիւրիոս կամ Կայիոս: Կարելի է նաեւ որ ես Հնախօսին գիրը միայն արտաբերելով՝ կարդացած ըլլամ Ռօսսի փոխան Ռասսի. ի, Ռօվֆի եւ կամ Ռամֆի:

Երկրորդ կէտին համար ալ կը խորհրդածեմ՝ թէ անկարելի է որ խօսքը ուրիշ Մատենադարանի վրայ յածի, չնայած զի Վենետիկ Միխիթարեան Գերյ. Հայրը, որ յիշեալ Սաղմոսը տեսած ու շօշափած է, չկրնար երբեմ շփոթել ոչ Մատենադարանին անունը, եւ ոչ ալ բաղդին՝ որ կը գտնուի այն, ըստ որում տարիին երիտասարդ է եւ օժտեալ բաւ հանճարով. ուստի կրնայ շաւ յիշել 10 տարի առաջ տեսածը:

Բաց ասէի այս Սաղմոսին գոյութիւնը յիշատակուած է նաեւ Բարեյիշատակ Հ. Դեւոնդ Ալիշանին, Մխիթարեան Վենետիկ, իր «Յուշիկ Հայրենեաց»ին մէջ, որ նոյնպէս կը հաստատէ թէ Միջնադարեան Ամբրոսիական Մատենադարանին մէջ կը գտնուի: Այս պատմական ծանօթութեանց ամենէն վերջապէս չեն կրնար սխալ ըլլալ: Հանդերձ այսու մեկ կողմ թողուելի ատոնց ամենէն բաւական է մեզի միայն որ այս Սաղմոսին գոյութիւնը Ձեր Մատենադարանին մէջ՝ յայտնուած է մեզի Ձեր տեղեկութեանն եւ Ձեր ցուցակներով ցցնուիլը. թերեւս ուրիշ անուան մը ներքեւ նշանակուած է: Սենոր համար կ'աղաչեմ ձեզի որ բարեհաճիք փնտռել զայն ամեն կարելի անուններով, եւ յղել մեզի խնդրուած լուսանկարները՝ որ խիստ շահաւէտ են:

Կրկին աղաչելով ուրեմն թէ հոդոյս վրայ ըլլօրէն խորհիլ եւ ընդունելու մեր խոնարհ յարգանքները՝ կը յայտարարեմ զիս

Ձեր Գերյարգոյ Տէրութեանդ Խ. Ծ.

Հ. Սահակ Սրապեան
Քարտուղար

Գերյարգոյ Հայր

. . . . . .

Փնտռուած գիրը գտնուեցաւ, եւ բան մ'ալ աւելի. ուրախ եմ Ձեզի հաւատել կարենալուս: Տուած նշաններէդ միայն մեծութիւնը համաձայն էր, միւսները զիս մոլորցնելու յաւէս կը ծառայէին: Գիրքս ունի 544 էջ, կազմ՝ մագաղաթ ներմակ, որ կը պարունակէ ամբողջ Սաղմոսը Ձեր յիշատակած երկու պատկերներով միասին, ատոնցմէ զատ ուրիշ մեկ հատ եւս կան, իսկ՝ պզտիկ՝ բայց շահաւէտ, նախ չունի, առաջին էջը պարապ է: Կարծեմ շատ աւելի դիւրին պիտի ըլլար ինքիրենս յիշել, եթէ դուք գրած չըլլայիք այնքան վստահութեամբ որ գրոյկ մ'է կատեկազմ եւ շագանակագոյն: Աւելցուցէք ասոր վրայ Ռօսսի Մատենադարանապետն ալ՝ որ 10-15 տարի առաջ մատենադարանապետն էր Մեդրապոլիտական ժողովոյն Մատենադարանին եւ ոչ Ամբրոսիական-ին, եւ պիտի իմանամ հարկաւ թէ որքան դրժուար էր ինձ խորհիլ այսպիսի երկդիմի վրայ:

Ինչ որ ալ ըլլայ, գիրքը գտնուած է, եւ նոյն ինքն է, որուն համար Le Lang. Masch. (Biblioteca Sacra) կ'ըսեն թէ տպեալ է ի Հռոմ 1565 ին: այս գիրքը ճնուած է Հ (Յովհաննէս) Զոհրապեանէն 31 Յուլիս 1810, որ սկիզբի եւ վերջի յիշատակարանները բարգմանելով ստուգած է որ 1565ին սկսած է տպուիլ ի Վենետիկ եւ աւարտած ի 1566: Սկիզբի Յիշատակարանները հարկաւ պիտի լուսանկարուին առաջին երկու պատկերներուն հետ, որոնց կից են, եւ որոնց համար դուք արդէն գրած էիք թէ կը բաղձամ անոնց լուսանկարուիլը: Կարծեմ լաւ բարգման եղած կ'ըլլամ Ձեր բաղձանաց լուսանկարել տալով նաեւ վերջին Յիշատակարանը:

Ըսի թէ բան մ'ալ աւելի գտնուեցաւ, այն է Հայերէն տպեալ թերթ մը Սաղմոսին գլուխը եղած երկու պատկերներով միասին, եւ ինչպէս ինձ կը թուի, գիրքին առաջ տպուած է: Ծանօթութեան մը համեմատ՝ որ Հ. Զոհրապեանի կը



212 Պոլսոյ մէջ Աբգարու տպած գրքերուն Նշանագրումը

վերագրուի, այս թերթը կը բովանդակէ 1565 տարւոյ Էփիմերիտէն: Պիտի լուսանկարել տամ այս թերթը իմ ծախքովս, որ պիտի ըլլայ իմ նուէրս մեծակայ Հարիւրամեակին համար. Միւսներուն հաշիւը լուսանկարիչը Ձեզի պիտի դրկէ:

Յարգանօք կը յանձնարարեմ զիս Ձեր աղօթից

Խ. Ծ.

Տ. Ա. Ռաբբի

Յ. Գ. Այս համակաւ կը դրկեմ գրաֆեա մը, որուն պարապ տեղերը Դուք պիտի լեցնէք եւ կ'աղաչեմ փութով վերադարձնէիք Միւս կողմանէ ես լուսանկարները արդէն հանել կ'ուտամ. Ա. Ռ:

Միլան, 27 Սեպ. 1910

Գերյարգոյ Հայր

Բաղձացուած լուսանկարները համբայ դրուեցան, ինչպէս նաեւ այն որ աւելի ըլլալով խոստացուած էր:

Հատորիկին միւս փոքր պատկերները չլուսանկարուեցան, վասն զի նիւթին չէին վերաբերեր, որ շահաւէտ ըլլային Հայոց պատմութեան:

Այն թերթը որ խառնափնթոր տուարը կը բովանդակէ, եւ որուն վրայ շատ կը բաղձայի որ ընդարձակ ծանօթութիւն մը տրուէր, ունի՝ մեծութիւն մեթր 0,51×0,35+1/2 չափելով եզերքի դրուագին որ շրջանակի կը ծառայէ

Յարգանօք յանձնարարելով զիս Ձեր աղօթից

Խ. Ծ.

Տ. Ա. Ռաբբի

Կ. Պոլիս, Օրթաքէօյ 24 Հոկտ. 1910

Գերյարգոյ Տէր

Հազար շնորհակալութիւն կուգամ դիմաւորել Ձեր յարգոյ թուղթը որ յ3 Սեպտեմբերի Գերյարգոյ Տէրութենէդ շնայլուած անխոնջ աշխատանաց համար, որով յաջողեցաք վերջապէս գտնելու Աբգարու Սաղմոսը Ամբրոսիական Մատենադարանին մէջ, եւ անոր բովանդակած երկու սեւագիծ պատկերաց լուսանկարներուն համար, որոնց կից է նաեւ առաջին Յիշատակարանը, ինչպէս նաեւ երկրորդ Յիշատակարանին եւ առաջին էջին, զորս բարեհաճեցաք մեզ դրկել, եւ մենք այժմ ստացած ենք զանոնք: Շնորհակալ եմ դարձեալ Ձեր մասնակցութեան համար մեր Ազգին Յոթնեղեանին՝ առջի Հայկական Տպագրութեան Դ. Հարիւրամեակին, որ պիտի տօնուի երկու տարի ետքը. նուիրելով միանգամ խառնափնթոր Տուարի մը լուսանկարը, հրատարակեալ նոյն Աբգարեն իր Սաղմոսին առաջ, որուն գիւղը Ձեզի կը պարտիմ ազգումին: Եւ որովհետեւ ասի ծանօթ Յիշատակարանին մէջ պիտի դրուի, կը բաղձայինք քանի մը լուսաբանութիւններ ունենալ անոր վիճակին եւ դրութեան վրայ, այսինքն՝ Սաղմոսին մէջ աւելցուած է՞ թէ ոչ տուփի մը մէջ առանձինն կը պահուի, վասն զի ծալք երբեմ չնկատուիր անոր վրայ: Անկէ զատ փափաքելի էր մեզի գիտնալ անոր կարգին թուահարարը:

. . . . . .

Ներկայիս կը դրկեմ Ձեզի փրանք 17:60 Ձեզարէ Սանթորէզի լուսանկարչին հաշուեփակին համար:



213 — Սուլթանշահի Նամակը

Վերջապէս նորեն կրկնելով իմ շնորհակալիս եւ աղաչելով Ձեզի ընդունելու իմ երախտագիտական զգացումներս եւ յարգանաց հաւատիմը պատիւ ունիմ ստորագրելու

Գերյարգոյ Տէրութեանդ

խ. Ծ.

Հ. Իսահակ Վ. Սրապեան
Քարտուղար Ամա. Միաբ.

Առ Գերյ. Տ. Ա. Ռաֆֆի
Վերակացու Ամբ. Մատ.
Միլան

. . . . . .

Միլան. Ամբրոսիոսեան մատենադարան
7 Նոյ. 1910

Գերյարգոյ Հայր

Կը պատասխանեմ Ձեր 24 Հոկտեմբերին, ընդունեցայ ղրկած գումարդ եւ հատուցի զայն լուսանկարչին: Անդադար զբաղմունքներ կարն եւ ցանցառ ժամանակ կը թողուն ինձ թղթակցութեան որ կարի շատ է արդէն, եւ պէտք է համբերութիւն ունենալ:

Գիրքին եւ թերթին մասին տարդեն տուած լուսաբանութեանցս վրայ պիտի յաւելում որ՝ թերթը կը գտնուի խառնապատում (Miscellanea) հատորի մը մէջ հեռեւեալ նշանով S. B. H. YHI Չափն է շուրջ մեր 0,56×0,46. շուրջ կ'ըսեմ, վասն զի լուսանցքը միշ մը անկարգ է, եւ կ'իմանամ թուղթին արտաքին լուսանցքը: Ուղղանկիւն ձեւը որ կը շրջափակէ եւ կը շրջանակէ գրութիւնը 0,51×35+2 նիշդ չափը ունի:

Հարիւրամեակին հրատարակման համար, որ երկու տարի ետքը պիտի տօնուի, պէտք եղածը կատարեցի: Հրատարակութիւնը տեղի պիտի ունենայ Periodico (պարբերական) հանդէսին մէջ, որ լոյս կը տեսնայ արբացուցման հարիւրամեակին համար Ս. Կարոլոս Պորոմէոսին, որ Սաղմոսին եւ խառնափնթուր Տոմարին պատկերներուն մէջ Պիոս Դ.ին քով հազիւ կը տեսնուի: Պարբերականին դիւրաւ կ'անցնի այլ եւս Ձեր Հարիւրամեակին լուրը ամենօրեայ լրագիրներուն:

. . . . . .

Յարգանօք կը անձնարարեմ զիս Ձեզի
Խ. Ծ.

Տ. Ա. Ռաֆֆի
Առ Գերյ. Հ. Իսահակ Վ. Սրապեան
Քարտուղար Ամա. Միա. Կ. Պոլիս

Ընթերցողը հարկաւ անդրադարձած է առաջին Յիշատակարանէն Արզարու սաղմոսին Վենետիկ տպուած ըլլալուն, մինչդեռ Le Long *և* Masch. (Biblioteca Sacra) *Սրբազան Մատենադարանին մէջ կ'ըսեն՝ թէ ի Հռոմ տպուած է, որով չգիտցուիր թէ ինչ ասպիճան կարեւորութիւն պէտք է ընծայել Եւրոպացւոց հայագիտութեան: Պատմիչներէն ոմանք ալ կ'ըսեն՝ թէ Պիոս Դ. գուցէ պայմանաւ հրաման տուած ըլլայ Արզարու՝ Սաղմոսի տպագրութեան, որ գիրքին գլուխը դնէ պատկեր մը այդ գիրքով որ վերը կը տեսնուի: Բայց Արզարու նորագիւտ Խառնափնթուր Տումարը, որուն գլուխը ևս կ'երևի նոյն պատկերը, բոլորովին կեղծանէ այն ենթադրութիւնը: Վասն զի Արզար եթէ հակառակ իր կամաց ազդեցութեան մը ներքև գրած ըլլար այն պատկերը Սաղմոսին սկիզբը, պէտք չէր ուրիշ հրատարակութեան մ'ևս գլուխը դնել զայն, ուստիկը կը հետևի որ նոա ինքնարերաբար չմտնել տուած է անոր կաղապարը, և յաժար կամօք երկրորդ հրատարակած:*

Բաղձալի էր մեզի այս թղթակցութեան իսաղէրէն ընդարձերն ալ արտատպել, բայց էջերու անձկութեան պատճառաւ անոր թարգմանութիւնները միայն հրատարակելով չատացանք:

Անտանեան միաբանութենէն Հ. Իսահակ Վ. Սրապեան գրած է վերոգրեալ կենսագրականը, որ մեծ ճեռնտուութիւն մը ըրած է մեզ: Գազափար մը տալու համար մեր ընթերցողներուն թէ ինչպէս կը պատրաստենք Յիշատակարանի ելքանչիւր կենսագրականը, հոս դնեցինք մանրամասնութիւնները՝ որոնք արդէն ինքնին պատմական կարեւորութիւն ունին: Իսկ Արզար դպրի և Սուլթանշահի նկարներուն պատրաստութիւնը կը պարտինք Ազգասէր Եղբարց արժանաւոր ճեռնտուն արուեստագէտ Պ. Ղուկաս Սրապեանի:

Աղբիւրներ.— Զամչեան պատմ. Հայոց Գ. հատոր.— Փոքրագեան եկեղեցական պատմութիւն.— Յուշիկ Հայրենեաց Այլիշան.— Պատմ. Հայկ տպագր. Լէօ.— Պատմ. Հայ. տպագրութեան Զարբհանալեան.— Հանդէս ամսօրեայ. Մատենադարան Անտանեանց և Ամբրոսիոսեան Միլան:

ԱՊՐՕԵԱՆ ԳԵՐԴԱՍՏԱՆ

1520—1793

1. *Ապրօեան ցեղը բուն Անի քաղաքէն եկած է և Բագրատունի արքայական ցեղէն է: Երկար ժամանակ Կարին բնակելէն և փառաւոր պաշտօններով մեծ անուն հանելէն ետքը 1521 թուականին Ալփիար միշեալ ասնմին նահապետը իր բոլոր գերդաստանով Տաճկաստան կը փոխադրուի և Պէլկրատ քաղաքը կը հաստատուի:*

(1804ին Ապրիլ 20ին Զմիւռնիոյ առաջնորդարանէն տրուած և Պոլսոյ պատրիարքէն ու ամիրաներէն և բաղմաթիւ եպիսկոպոսներէ, վարդապետներէ և քահանաներէ վաւերացուած ինչպէս նաև Ռուսիոյ և Ֆրանսայի արտաքին գործոց պաշտօնեաներէն վաւերացեալ վկայականէ մը քաղուած:

2. *Աբրահամ Ապրօ. — Իր մեծ հայրն էր Ալփիար Ապրօ: Աբրահամ 1634 ին Երուսաղէմ ուխտի գացած էր: Մեծ հանճարովը ճոխութեամբ և հաւատարմութեամբ երեւելի հանդիսացած է, իր նախնական կրթութիւնը ուժով էր և հետզհետէ կը յառաջդիմէ, ամէնուն սիրելի կը հանդիսանայ մանաւանդ հուչակաւոր Հիւսէյին փաշային որ զօրապետն էր Կրետացիներու դէմ պատերազմող զօրագունդին: Քէօփրիւլիւ օղլու Մէհմէտ փաշա Եպարքոս էր որ*

չատ կը յարգէր Ապրօն, մինչև անգամ կը հրամայէ որ կոչուի Ապրօ Զէլէպի։

Ապրօ երբ Կրէտէ կը գտնուէր՝ Օսմանեան բանակին հետ —իբր վաճառական Հիւսոյին փաշայի— երբ կը գրաւեն կղզին, ճարտար վիճաբանութեամբ եկեղեցի մը կ'առնէ հայոց համար, որովհետև ռումբերէն քայքայուած էր։ Եկեղեցին իր ծախքով կը նորոգէ, պատրաստելով նաև բոլոր եկեղեցական զարդերը։

Բանակին չատ նպաստած ըլլալուն և իր անկեղծ հաւատարմութեանն համար որ ունէր առ Օսմանեան գահն, Սուլթան Իպրահիմ կը շնորհէ Խաթիթ Շերիֆ մը, որով ամէն կերպով ազատ էր, համարձակ և անմաքս վաճառականութիւն ընելու արտօնութեամբ։

1661ին Պոլիս կու գայ ուր 1660 Յուլիս 14ին այրած էր Զինիլի Համամի Ս. Սարգիս և Հինար Տիպիի Ս. Նիկողայոս եկեղեցիները, Ապրօ Զէլէպի այս վերջինը վերաշինել կու տայ նոյն թուականին։ Նաև կառուցած էր իր ծախքով Սիլիվրիի, Մահաչքի և Ֆիլիպէի եկեղեցիները։

Արբահամ Ապրօ ամուսնացած էր Կիւլինան անուն աղջկան մը հետ և ունեցած երկու մանչ զաւակ Մատթէոս և Մաքսուտ։

Մատթէոս Ապրօ. — Ապրօ Զէլէպիի որդին էր Մատթէոս որ 1687 թուականին երբ արդէն վախճանած էր իւր մեծանուն հայրը՝ Պոլիսը թողլով Նոյեմբեր 15ին Զմիւռնիա կ'երթայ, ուր տարիի մը չափ ուրիշներու տուներու մէջ հիւր ըլլալէն ետք, կը փափաքի տունի մը տէր ըլլալ և կ'ըսկսի շինել նոր տուն մը, որուն չատ դրամ կը ծախսէ և վայելուչ ու պատշաճ շինուածով կ'աւարտէ 1688 Յունիս 7ին, այն օրը չուկայ կ'երթայ ուր անական պէտքեր գնելով կը վերադառնայ և երբ հայոց եկեղեցւոյ առջևէն կ'անցնի ահա նոյն միջոցին անագնադղորդ երկրաշարժ մը կը պատահի, չորս կողմէն քարեր իր վրայ կ'իյնան ու ինք մաղապուր կ'աւղատի, հակառակ որ ինք քարերու տակ մնացած էր։ Արիւնլուայ վիճակի մէջ քարերու տակէն դուրս կ'ելլէ և կը վազէ իր տունը ուր իր մայրը և երկու զաւակները մեռած էին փլատակներու տակ (1)որոնց մարմինները չատ դժուարութեամբ կը հանէ փլատակներու տակէն, իսկ աղջիկը մնացած էին իր կինը և զոքանչը կը դրէ Մատթէոս Ապրօ, ձեռագիր Աստուածաշունչի յիշատակարանին մէջ։

— Յորժամ տեսի զլեարդ և զաղիս իմ խարշատեալ
Իբր զվաղող մէջ հրնձանի էին ճմլեալ
Հառաչանօք աւաղելով զկեանս իմ անցեալ
Զի բազմ երկամբք աշխատանօք էաք մնուցեալ
Զքաւեակ մանկունս բարձմամբ ի գլուկ չիրիմ տարեալ։

. . .

Եկեղեցին ալ կործանած էր և քաղաքը աւերակ դառցած։ Բնակիչներէն չատեր վիրաւոր և մեռած և ոմանք ալ խելագարած էին։

Կարծես ընութեան այսքան աւերը չէր բաւէր ահա լափլեղող հրդեհն ալ սկսած էր որ քանի մը ժամերու մէջ չատեր այրեց ու լափեց և անպէտ մներ և ապարանքներ մոխրի վերածեց, ոչ հայրը կարող էր օգնել իր որդւոյն և ոչ ալ որդին իր հօրը։

Հարուստները աղքատացան վայրկենապէս, ամէն մարդ կը փախչէր հոն թողլով իր հարստութիւնը և ինչքը։ Դժբաղդ Մատթէոս Ապրօյի տունը կը փլչի իր մէջ թաղելով եօթը աշխատաւորներ, և այս ամէնը կ'ըսէ նոյն յիշատակարանը «Վասն իմ մեղայն իմացայ ես։»

«Աւաղ եղայր իմ զոր Մաքսուտ կոչեցեալ է զոր այժմ երկրին Լատինայեաց զետեղեալ է երեսս եդեալ զձեզ աղերսեմ ով ընթերցող Աստուածարուխ տառիս պատմողք և հետևողք յիշել յաղօթս զիս և զեղբայրս հանդերձ ծնողաւք ողորմիս տալ ըՀմատութեամբ որպէս մոօք։» Գայ գրեցաւ ի թուականիս Հայկականի 1140, (1691 ի յամսեանն Փետրվար 18 Դուռն Սրբոյ եկեղեցւոյս Ստեփաննոսի Բանիւ Յովսէփի անի[illegible] մեղայ պարապանի եպիսկոպոս ի Զմիւռն[illegible] Ասիայի որք յանդիպիք և ընթեռնուք դուք [illegible] զոր, զիս միթէ՝ Տէրն իմ ձեզ և մեզ ողորմի[illegible]

Մատթէոս Զէլէպի գրասէր էր և 168[illegible] գեղեցիկ նկարներով զարդարուն ձեռագիր Աստուածաշունչ մը գտած է որուն յիշատակարան[illegible] քաղեցինք վերև տուած տեղեկութիւններնիս[illegible] որուն 2 յիշատակարանները նոյնութեամբ [illegible] զետեղենք։

(1)Իրենց դամբարանը կը գտնուի Զմիւռնիոյ մէջ հետևեալ արձանագրութեամբ «Այս է տապանք Ապրօեան Մատթոս աղայի որդիք Արբահամ և Մուրատ խան աղայներայ որ հանգեան ի չարժէն ի թվին ՌճԼէ Յունիսի է։

«ՑԻՇԱՏԱԿԱՐԱՆ» պիտի հրատարակուի պրակ առ պրակ ամիսը անգամ մը, ամբողջութիւնը պիտի բաղկանայ 48 պրակներէ՝ 4 հատորի մէջ ամփոփուած և պիտի պարունակէ երեւելի ազգայիններու լուսանկարները, կենսագրութիւնները և ձեռագիր անտիպ գրուածները, կախողիկոսներու և պատրիարքներու կնդակները և այլն։

Կը շարունակուի Բ. Դ. Դ. հատորներու բաժանորդագրութիւնը 80 ղրուշի։

Կոչում կ'ընենք հասարակութեան և բանասէրներու մեզ ուղարկել իրենց քով ունեցած տօքիւմանները, ըլլան լուսանկար թէ ձեռագիր և կամ կենսագրութիւններ որոնք անվթար իրենց կը վերադարձնենք դարձեալ։

Ամբողջ գործին բաժանորդագրութիւնն է կանխիկ մէկ օսմանեան ոսկի ամէն տեղիամար, իւրաքանչիւր հատորի համար 30 ղրուշ։

Բաժանորդներու անունները պիտի հրատարակենք հետզհետէ։

Գործը պիտի աւարտի մինչև 1912 տարւոյ սկիզբները և բաժանորդները պիտի սանան իրը նուէր գեղարուեստական չքեղ կողքեր որոնք արուեստասէրներու յանձնած ենք պատրաստուելու համար և որոնք խորհրդանշանը պիտի ըլլան Հայ Տպագրութեան 400 ամեայ Յոբելեանին։

Վստահ ենք թէ Հասարակութիւնը պիտի գնահատէ այս գործը որ բազմածախսեղած է և որուն համար տարիներով տքնած և տառապած ենք։

Հրատարակուած է արդէն առաջին հատորը որ կը վաճառուի 30 ղրուշի Պոլսոյ Զարդարեան գրատուն, Բերա Վայսի գրավաճառատունը, Ալէքսանդրիա Յ. Ղազիկեանի և և Գահիրէ Սուրէն Զաք մաքճեանի քով։

Մէկ պրակի գինը 2 ղրուշ. գաւառներու համար 100 փարա
Դիմել Զարդարեան Գրատուն, Պոլիս, Զարմագիբար, 24 — 26։
Կը ծախուի ամէն տեղ։

ՄԵՐ ՎԱՃԱՐՈՂ ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐԸ

Տեարք		Ղրշ.
		6274
87. — Հմայակ Խոսրովեան	4 Հատորի	108
88. — Ֆէլիքս Շատան	Բ. »	30
89. — Մելքոն Մինասեան	Բ. »	30
90. — Միքայէլ Մարտիկեան (Պիլէֆիք)	Ա. Բ. »	54
90. — Վռամշապուհ Մատթէոսեան	Ա. Բ. »	54
		6550

ՀՀ Ազգային գրադարան
NL0251057